

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ ԳՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՐՑԱՆԻ  
ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ\*

Ռենա Մովսեսյան

**Քանալի բառեր**<sup>1</sup> դարձվածային միավորներ, բարբառային միավորներ, գրական լեզու, փիլիսոփայական աշխարհընկալում, էական տեղեկություն, գեղարվեստական գրականություն, արտահայտչականություն, բարբառային դարձվածներ, գրական համատեքստ, գրականացում:

*Յուրաքանչյուր լեզվի մեջ ապրում է մի առանձնահատուկ մտածողություն՝ ժողովրդի հոգեբանությունը: Ազգի մտածողությունը ճանաչվում է հատկապես դարձվածներով, որովհետև դրանք ժողովրդական լեզվի ու երևակայության մեջ մշակման ու վերափոխման արժանիքներ են: Դարձվածների ուսումնասիրությունը կարևորվում է նաև իմացաբանական լեզվաբանության տեսանկյունից, որովհետև դարձվածները տեղեկություն են տալիս լեզուն կրող ժողովրդի բարքերի, սովորությունների, բարոյական արժեքների և ընդհանրապես կենսափիլիսոփայության մասին:*

*Լինելով ժողովրդական մտածողության ծնունդ՝ դարձվածներն իրենց ծագմամբ հիմնականում կապված են խոսակցական լեզվի ու բարբառների հետ և ապա այնտեղից թափանցում են գրական լեզու: Կարևորելով հայերեն դարձվածների դերը լեզվի մեջ՝ Ա. Պապոյանը գրում է. «Դարերից ի վեր սերնդից սերունդ ավանդված այս դարձվածները անընդհատ մշակվել են, հղկվել ու բյուրեղացել՝ ընդհանրացնելով ու խտացնելով իրենց մեջ փորձությունների հորձանքների ու արհավիրքների բովով անցած մի ամբողջ ժողովրդի կենսափիլիսոփայությունը, ազգային սովորություններն ու բարքերը, դառնալով միայն իրեն՝ հայությանը հատուկ մտածողության ձև» [1]:*

*Դարձվածը ոչ միայն բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերափոխատարված կապակցություն է, այլև խոսքի պատկերավորման միջոց, ունի արտահայտչական մեծ հնարավորություններ: Անփոխարինելի է դարձվածների դերը հատկապես գեղարվեստական գրականության մեջ՝ խոսքի պատկերավորման ու ստեղծագործության ժողովրդականացման, ինչպես նաև խոսքին սեղմություն, դիպուկություն հաղորդելու, իմաստի խտացման, լեզվական առավել սուղ միջոցներով հարուստ բովանդակություն արտահայտելու գործում: Գրողները կենդանի խոսքի արտահայտչականությունն ու ջերմությունը պահելու և հերոսներին տիպականացնելու նպատակով հաճախ են գործածում ժողովրդախոսակցական ու բարբառային դարձվածներ: «Ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ լեզվական միջոցների ու դարձվածների օգտագործումը պայմանավորված է ստեղծագործության թեմատիկայով և ծուլվում ու ներդաշնակվում է նրա ոճական հենքին», - նշում է Ա. Մարությանը [2]:*

*Անշուշտ, դարձվածի հեղինակը համարվում է ժողովուրդը: Այդ է պատճառը, որ շատ հաճախ դժվար կամ անհնար է լինում վերականգնել դարձվածի ծագման ժամանակը, ձևը, պատմությունը: Դարձվածը մարդկային հոգեբանության, կենսափիլիսոփայության, բարքի ու սովորության հայելին է: Եվ եթե կան համամարդկային հոգեբանական երևույթներ ու կենսափիլիսոփայական ընդհանրություններ, ուրեմն գոյություն ու-*

\* Հոդվածն ընդունվել է 15.02.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՍՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնը:

նեն նաև դրանց հիման վրա առաջացած համընդհանուր գործածություն ունեցող դարձվածներ: Սրանց կողքին գոյություն ունեն նաև միայն այս կամ այն ժողովրդին բնորոշ դարձվածները՝ որպես ազգային մտածողության ու հոգեբանության, կենցաղավարության ու սովորույթների արտահայտություն, ընդ որում սրանց թիվը անհամեմատ շատ է: Նպատակ չունենալով բացահայտելու այս կամ այն դարձվածի ո՛չ ծագումը, ո՛չ տարածման սահմանները՝ մեր հոգվածում քննել ենք Արցախի գրողների ստեղծագործություններում տեղ գտած դարձվածային բարբառայնությունները՝ որպես գեղարվեստական երկի ոճավորման պատկերահամակարգի տարր և գրական համատեքստում դրանց կրած փոփոխությունները:

Ժողովրդական խոսքն ու բարբառները ժամանակակից հայերենի դարձվածների հիմնական աղբյուրն են: «Արդարև մեր գրական լեզվի դարձվածաբանության համար մենք լրիվ պարտական ենք բարբառներին» [3]: Դարձվածը բարբառից գրական հայերենին է անցնում հիմնականում գրականացմամբ: Գրական հայերենի ազդեցությամբ բարբառային դարձվածներն այս կամ այն չափով գրականանում են՝ կրելով բառային և քերականական որոշակի փոփոխություններ՝ ձևավորելով դարձվածային տարբերակներ: «Սովորաբար դարձվածային տարբերակներ են համարվում նույն իմաստը և բաղադրիչների միևնույն, հաստատուն կազմ ունեցող այն դարձվածքները, որոնց բաղադրիչները նույն բառի քերականական տարբեր ձևերն են՝ կամ բարբառային, և կամ էլ փոխառյալ համագործերն ու համանշանակները»: [4]

Ելնելով դարձվածային տարբերակի սահմանման այս սկզբունքից՝ կարող ենք ասել, որ բարբառային դարձվածի բաղադրիչի գրականացմամբ ձևավորվում են բարբառային դարձվածների տարբերակներ: Այդ երևույթը հատկապես երևում է գեղարվեստական գրականության մեջ, որտեղ դարձվածը հանդես է գալիս գրական համատեքստում: Այստեղ դարձվածի գրականացմանը նպաստում են ինչպես գրական համատեքստում հանդես գալը, այնպես էլ գրողի՝ երկը հասկանալի դարձնելու նպատակը:

Դարձվածների գրականացումն արտահայտվում է ինչպես դարձվածը կազմող բաղադրիչների՝ գրական համարժեքներով փոխարինվելով, այնպես էլ քերականական վերջավորությունների գրականաձև կիրառությամբ: Նախ առաջինի մասին. Դարբառի բարբառում կան **հաքին բուլի-բուլի անել** (շողոքորթել, խորամանկել), **հափրռունը չօփ տինիլ** (մեկին գերազանցել, հնարամտությամբ մեկին խաբել), **յնիշին լավը չաղալը կօտ** (լավ բանը անարժանին է բաժին ընկնում), **ռժխը չըրչարել** (շատախոսել), **փօխլումը փղթաղ ինիլ** (մեղավոր լինել, թերություն ունենալ), **քօռ կապեկ չնձի** (1.անարժեք է, 2.ոչ մի նշանակություն չունի), **խըլարը ծօռ փղսնել** (գործը ձախողվել, հակառակ ընթացք ստանալ), **վը՛սկէն չօխավ պիցըրցնել/պըրանել** (շատ հարուստ լինել) և այլ դարձվածներ: Դրանց մասնակի գրականացված տարբերակներ են՝ **պոչը բուլի-բուլի անել**, **բռի մեջ չօփ դնել**, **փողքումը փթաղ լինել**, **քօռ կոպեկ չարժե**, **ոսկին չփով բարձրացնել**, **ռեխը չարչարել**, **սեխի լավը չաղալը կուտի**: Այս օրինակները հանդիպում են Մ. Հովհաննիսյանի ստեղծագործություններում: Այսպես՝ Անուշ կնիկ, նախ և առաջ աղվես, աղվեսի տղա Սերգուն ասա թող **պոչը բուլի-բուլի չանի**: [5] Բա՛, Հեղուշ կասեն, Հերսիկի **քռի մեջ չօփ դրեց**: Խեղձ, խեղձ Հերսիկ, դժբախտ աղջիկ դուրս եկավ: [6] Չոհրաբը մտքում ասաց՝ պա **փողքումը փթաղ կա**, մտածեց՝ իր վրա ծանր շալակ ունի դնելու: [7] Երկուսը միասին մի **քօռ կոպեկ չարժեն**: [8] Գեներալ Մադաթովի ցեղից է, չի անի, մարդու տղան **ոսկին չփով է բարձրացնում**: [9] Այս բանում մենք Շահենի ու Արտաշի **քռում չօփ կընենք**: [10] Իզնատը՝ գրո, կամ Իզնատը, կամ աղոթած էշը: Նրանը ակումբում **ռեխը չարչարելն** է: [11] Օրենք է՝ **սեխի լավը չաղալը կուտի**,-բորբոքվում է

Աղվանը: [12]

Բարբառային բազմաթիվ դարձվածների այսպիսի գրականացված տարբերակների հանդիպում ենք նաև **Սարգիս Աբրահամյանի, Հանյետ Մարտիրոսյանի, Վարդան Հակոբյանի, Արտաշես Ղահրիյանի, Վազգեն Օվյանի, Գուրգեն Գաբրիելյանի** և այլոց ստեղծագործություններում: Իսկ թե ինչպես է գրողը փոփոխության ենթարկում դարձվածը, պայմանավորված է նրա գեղագիտական ճաշակով: Օրինակ՝ Դոնմագն էլ կնոջն անվանեց «աղվես», իսկ նրա հորը՝ «բեղից ընկած քրինձ»: [13] Աստված ձեր հակին պինդ նստած է: Եվ նա եղջերվապոզերը Ռուսաստանից բերեց, ամրացրեց տան ճակատին: [14] Վանեսյան, դու կտրվես, Զոհրաբը քո կաշին դաբաղխանից է ձանաչում: [15] Իբր Վանուն բարեկամ է՝ քրոջ ամուսնու փեսան էշը աղբահարում թավալ է տվել: [16] Այ սատկես դու, հա... գելի փայ դառնա: [17] Նա ախար մեր տուն էր գալիս, ինչպես չարքաշ ու սիրտը լեն աստված: [18] Կտեսնես, որ սաղ աշխարհիս ջիւլվր հալի ձեռքումն է: [19] Դու էլ կեցցես: Լավ գլխի ընկար, որ եղը մածնիցն է լինում: [20] Կնանիքը կնանիք, ամա դե՛ ասված խոսք է, որ էժը էժի համար լավ է, քան հազար ոչխարը: [21] Սև օձից վախեցածը սև չաթվից էլ է վախենում, մեկ էլ հանկարծ սիրտը նորից բռնվեց: [22] Դուք ձեր պլոկված ձիտը չարչար օրվան դեմ արած սատկեք, ես կանեմ՝ ինչ սիրտս է ուզելու: [23] -Ուեսդ փակիր,-պատասխանեց միջանցքում հայտնված Կրոմվելը և կրկին սուզվեց վարագույրից ներս: [24] Պոզեղո հանեցիր, չէ դե պարզ ասա, որ որոշել ես ինձ Կուսաբերդից քշել: [25] Չկանգնի՞ ու խնդրի՞. «Այ ժողովուրդ, ախր, գիտեք, իմ հայ-հայր գնացել, վայ-վայն է մնացել, եկեք մեկ ուրիշին ընտրենք»: [26] Քաչալը ճար անող լինի, իր գլխին ճար կանի: [27] Չէ, լավ են ասում, մարդ որ մեծանում ա, գլխի ծեթը պակասում ա: [28] Տափից մինչև երկինք շնորհակալ եմ: [29]

Ընդգծված դարձվածները Ղարաբաղի բարբառի հետևյալ դարձվածների մասնակի գրականացված տարբերակներն են. **բեղա վեր ընգած պրորինձ** (անպատիվ, հարզանքից զրկված), **Աստուծ հակէն նրստէլ** (Աստված օգնական լինել), **կաշին դաբաղխանումը ճրնանչիլ** (մեկի բացասական, վատ հատկություններին նախապես տեղյակ լինել), **էշը ըխպրիարումը (մոխրումը) թավալ ա տրվալ** (չեղած տեղից ազական է ներկայանում), **կուլգնձ փայ տըրնալ** (անտեղի կորչել, վատնվել), **սըրտը լէն** (սրտաբաց, մեծահոգի), **ջիւլվր ծերքումն ա** (իշխանությունը ձեռքումն է), **յէղը մածնան ա ինում** (ճշմարտությունն է, ապացուցելու կարիք չկա), **էժը էժին հըրտէ լավա, կանց մին սէրու վըրխճարը** (յուրաքանչյուրն իրեն համապատասխան մարդու հետ, ավելի լավ է զգում), **սըրվ օխստըրսածը սըրվ չաթվան էլ կվախէ** (մի բանից տուժածը զգուշանում է այն հիշեցնող բոլոր առարկաներից), **պըլօկված ճիտը չարչար օրվան տէմ ըրած** (բազմաչարչար), **ըրխըր կապէլ** (1.լռել,2.լռեցնել), **պօզէրը տուս օնէլ** (ըմբոստանալ, դժգոհել), **հայ-հայը քինիլ, վայ-վայը մնալ** (երիտասարդությունը՝ լավ օրերը անցնել, ծերությունը՝ վատ օրերը հասնել), **քաչալը վըր ճար անօղ ինի, ուրան կըլխէն ճար կանէ** (որևէ պակասություն ունեցողը, եթե հնարավորություն ունենա, իր պակասությունը կվերացնի), **կըլխէն ծեթը պըկասէլ** (հիմարանալ), **տափան մընչէվ յէրգինք** (չափազանց շատ), **սասը փօրը քըցիլ** (սակվել, պապանձվել), **պըկէն չօթէլ** (1.ստիպել, հարկադրել, 2.նեղել):

Այս օրինակներում, ինչպես տեսնում ենք, բարբառային դարձվածների ոչ բոլոր բաղադրիչներն են գրականացվել, դրանց կազմում շարունակում են մնալ բարբառային բառաշերտին պատկանող բառեր՝ **(բեղ** (ընչացք), **նէրվ** (նյարդ), **հակ** (խուրջինի երկու աչքերից յուրաքանչյուրը), **դաբաղխանա** (կաշի դաբաղելու արհեստանոց), **քաչալ** (ճաղատ), **ջիւլվ** (պախուրց, սանձ), **ծէթ** (ծեթ), **չաթու** (թոկ), **էժ** (այծ) և այլն:

Բարբառային դարձվածի գրականացումը ենթադրում է նաև քերականական վեր-

ջավորությունների փոփոխություն: Փոփոխվում են ինչպես հողավածների, հոգնակերտների, այնպես էլ բայի ժամանակածնի վերջավորություններն ու հանգույցները: Այսպես, օրինակ, Արցախի բարբառն ունի **վախտ լրդարան, փախտ ճողարան** դարձվածք, որը Մ. Հովհաննիսյանն օգտագործել է **վախեցիլ լրարից, փախչի ճաղարից** տարբերակով՝ գրականացնելով **լրդար, ճաղար** բառերի բացառականի վերջավորությունը (**-ան** բարբառայինը փոխարինելով **-ից** գրականով): Դարաբաղի բարբառն ունի, **ըժժիլը ճղած** (անգաղտնապահ, վայրահաչ), **վըժը քո չինավ կտրել** (տանջամահ անել), **պաղվը տափավը տալ** (պատվագրել), **խը՛լըու սոսպրակ** (1.շատ խելոք, գրագետ, իմաստուն, 2.հեզն. հիմար, տխմար), **տափէն տական էլ ա** (որտեղից էլ լինի) դարձվածները, որոնց հոգնակերտ և հողավական վերջավորությունների գրականացմամբ ձևավորված տարբերակները (**վիզը քո չինով կտրել, ռեխները ճղած, պատիվը տափովը տալ, խելքի տոպրակ, տափի տակից էլ լինի**) հանդիպել ենք խնդրո առարկա ստեղծագործություններում. Գնա Վանեսանց ցեղից պտկածին հավատացրու, որ էդ բոլորը ռեխները ճղած հարարեցիների հնարածն է: [30] Սերգու գործն է, մտքում որոշում է Բուղին և հաստատ վճռում նրա վիզը քո չինով կտրել: [31] Պետունց ազգի պատիվը տափովը չտաք: [32] Տափի տակից էլ լինի, ամենաքիչը երկու հավ պիտի գտնես: [33]

Իսկ բարբառային **յա աղն ա պակաս, յա մաղը** (որևէ հոգս, խնդիրք ունի) դարձվածում գրականացվել են հանգույցները. այսպես՝

*Չոհրաբը, շարունակելով խաղալ Ազդունի հետ, պատասխանեց.*

*-Կամ աղն է պակաս, կամ մաղը: [34]*

Դարձվածային միավորների գրականացման մի յուրօրինակ ձև է բարբառային բայական դարձվածների գրականածն խոնարհումը: Օրինակ՝ուռուր հարս, **պըռչս ձաքում** է մի ստաբան չայի համար: [35] Սակայն մուկ բռնող Փառավունի աղջիկն **աղու տանձ է կծել**: [36] **Չանան ծռում է, թե՛** ես ձեր «ընտանեկան գործերին» չեմ խառնվում: [37] Վանի, **չափարը ձմռում ես**-նախագահն ուզում է բարկանալ...: [38]

Այստեղ բարբառային **պրոռջը ճաքել** (1.սաստիկ վախենալ, 2.շատ կարոտել), **չանան ծռել** (ստորանալով խնդրել, աղերսել), **աղու տանձ կծել** (տրամադրությունն ընկնել), **չափարը ձըռռել** (չափն անցնել) դարձվածները խոնարհվել են գրակա-նածն. գրականացվել են թե՛ ձևաբայերի վերջավորությունները, թե՛ օժանդակ բայերը:

Այսպիսով՝ ժողովրդախոսակցական և բարբառային դարձվածները ժողովրդի իմաստնության բովում դարբերով թրծված կառույցներ են՝ ձևավորված բարբառին հատուկ բառային ու քերականական օրենքներով:

Գեղարվեստական գրականության մեջ, ինչպես տեսանք, դարձվածք «որևէ ձևով կերպարանափոխվելով՝ համապատասխան պատկերի մեջ ստանում է նոր հնչողություն՝ միաժամանակ պահպանելով հարյուրամյակների ընթացքում իր մեջ խտացված բովանդակությունն ու նշանակությունը»: [39]

Եվ անհրաժեշտ է, ի հաշիվ դրանց, հարստացնել գրական լեզուն և մասնավորապես գեղարվեստական գրականության լեզուն, մանավանդ, որ լեզվի հաղորդակացական բնույթն այլ զարգացում է ենթադրում. «Դարձվածքային տարբերակները գրական լեզվում կիրառական ոլորտների ընդարձակման և բարբառների գործառական սահմանափակման պայմաններում աստիճանաբար պակասում են: Այս երևույթը պայմանավորված է լեզվի հաղորդակցական բնույթով: Բառային տարբերակները ևս անցնում են նույն ուղին: Եթե նույն հասկացությանը ծառայում են մեկից ավելի տարբերակներ (բառային կամ դարձվածային), ապա դա ինչ-որ չափով ավելցուկային կարգ է, որը միտում ունի վերանալու, կամ տարբերակներից մեկն ու մեկը վերածվում է հոմանիշի (ըստ անհրաժեշտության)»: [40]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Երևանի պետական-սարանի հրատ., Եր., 1970, էջ 79
2. Մարության Ա., Եղիշե Զարեմցի չափածոյի լեզուն և ոճը, «Սովետական գրող» հրատ., Եր., 1979, էջ 84:
3. Առաքելյան Վ.Ղ., Հայ գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության հարցի շուրջ, ՊԲՀ, հ.3, Եր., 1964, էջ 150
4. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, ԵրՊՀ հրատ., Եր., 2007, էջ 188:
5. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ. Ստեփ., 2005, էջ 227
6. Նույն տեղում, էջ 156:
7. Նույն տեղում, էջ 404:
8. Նույն տեղում, էջ 195:
9. Նույն տեղում, էջ 294:
10. Նույն տեղում, էջ 181:
11. Նույն տեղում, էջ 359:
12. Նույն տեղում, էջ 239:
13. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, «Ամարաս» հրատ., Եր., 2008, էջ 384
14. Ղահրիյան Ա., Պատրանք, «Սովետական գրող» հրատ., Եր., 1983, էջ 54
15. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, էջ 404:
16. Նույն տեղում, էջ 285:
17. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, ՀԳՄ հրատ., Եր., 2007, էջ 66:
18. Ղահրիյան Ա., Պատրանք, «Սովետական գրող» հրատ., Եր., 1983, էջ 36:
19. Աբրահամյան Ա., Սերունդների հետ, Եր., 2008, էջ 461:
20. Նույն տեղում, էջ 519:
21. Նույն տեղում, էջ 494:
22. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, էջ 278:
23. Ղահրիյան Ա., Պատրանք, Եր., 1983, էջ 11:
24. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, Եր., 2007, էջ 22:
25. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, Եր., 2008, էջ 175:
26. Նույն տեղում, էջ 288:
27. Օվյան Վ, Կապույտ տարիներ, «Դիզակ պլուս» հրատ., Ստեփ., 2007, էջ 271:
28. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, Եր., 2008, էջ 295:
29. Նույն տեղում, էջ 402:
30. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, էջ 342:
31. Նույն տեղում, էջ 129:
32. Օվյան Վ, Կապույտ տարիներ, Ստեփ., 2007, էջ 44:
33. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, էջ 345:
34. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, էջ 400:
35. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, էջ 490:
36. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, էջ 27:
37. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, էջ 432:
38. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, էջ 114:
39. Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Երևանի պետական-սարանի հրատ., Եր., 1970, էջ 81:
40. Զահուկյան Գ., Բ, Աղայան Է. Բ, Առաքելյան Վ. Ղ, Քոսյան Վ. Ա, Հայոց լեզու, Առաջին մաս, Ա պրակ «Լույս» հրատ., Եր., էջ 494:

**ԱՄՓՈՓՈԳԻՐ**  
**Բարբառային դարձվածների գրականացումը Արցախի գրողների**  
**ստեղծագործություններում**  
**Ռենա Մովսեսյան**

Բարբառային դարձվածների ուսումնասիրությունը և վերլուծությունը կարևորվում են ոչ միայն բարբառի, այլև տվյալ լեզվի և ժողովրդի մշակույթի պատմության, փիլիսոփայական աշխարհընկալման տեսանկյունից՝ նպաստելով բարբառների ձևավորման ժամանակի, գրական լեզվի ու բարբառների հարաբերության հստակեցմանը:

Այդ առումով բարբառային դարձվածները մեծ տեղեկություն են պարունակում Ղարաբաղի և ղարաբաղցու մասին: Այս դարձվածները, լայնորեն օգտագործվելով գեղարվեստական գրականության մեջ, ընդգծում են նրա արտահայտչականությունը:

Արցախի գրողների ստեղծագործություններում գործածվում են մեծ թվով բարբառային դարձվածներ, որոնք գրական համատեքստում այս կամ այն չափով գրականանում են, ինչն էլ դարձրել ենք մեր ուսումնասիրության առանցքը:

**РЕЗЮМЕ**  
**Литературализация диалектных фразеологических единиц**  
**в произведениях арцахских писателей**  
**Рена Мовсесян**

**Ключевые слова:** *фразеологические единицы, диалектные единицы, литературный язык, философское мировоззрение, существенная информация, художественная литература, экспрессия, диалектные идиомы, литературный контекст, исследование, литературализация.*

Анализ и изучение диалектных фразеологических единиц является важным не только с точки зрения диалекта, но и истории культуры, философского мировоззрения данного языка и народа, способствуя времени формирования диалектов, конкретизации отношений между литературным языком и диалектом.

В этом плане диалектные идиомы содержат большую информацию о Карабахе и карабахце. Эти идиомы, широко употребляясь в художественной литературе, усиливают ее экспрессию.

В произведениях арцахских писателей используется большое количество идиом, которые в литературном контексте в той или иной мере подверглись литературализации, что стало основой нашего исследования.

SUMMARY

**Literalization of Dialectal Phraseological Units in the Works of Artsakh Writers  
Rena Movsesyan**

**Keywords:** *phraseological units, dialectal units, literary language, philosophic worldvision, sufficient information, fiction, expressive, dialectal idioms, idiom varieties, literary context, investigation, literalization.*

The analysis and study of the dialectal phraseological units is important not only from the point of view of dialects but also the history, culture, philosophic worldvision of the given language and people, promoting the relations of the literary language and dialect.

From this position dialectical idioms contain sufficient information about Kharabakh and the Karabakh people. Having been used in fiction they enlarge the expressive abilities of the language.

The works of Artsakh writers are rich in various dialectal idioms, which were literalized in the literary context and have become the basis of our investigation.